ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԻՐՈՒՄՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐԱՅԻԿԻ

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Թ. 00. 01 – Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Ա. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Հ. Դեմիրճյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. ապրիլի 19-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ. 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի քաղաքակրթական և սոցիոմշակութային փոխակերպումները, որոնց հետևանքով աշխարհը գնալով դառնում է խճանկարային և անկանխատեսելի, հարուցում են անորոշության և տագնապի զգացումներ: Հանգամանք, որը սոցիոմշակութային տարածության կառուցարկման և նոր պայմաններին ու հանգամանքներին համարժեք վարք դրսևորելու խնդիրը դարձնում է արդիական ու հրատապ: Առավել ևս, որ ժամանակակից աշխարհում մի կողմից կարևորվում է սոցիալական համակարգի կայունության ու կարգի խնդիրը, մյուս կողմից, սակայն, սոցիոմշակութային կյանքում տեղի են ունենում այնպիսի փոխակերպումներ և իրարամերժ գործընթացներ, որոնք վտանգում են երբեմնի հաստատված համակեցության կարգը՝ խաթարելով համակարգի արդյունավետ գործառությունն ու զարգացումը: Այս առնչությամբ ժամանակակից աշխարհում հանդուրժողականության հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական և գործնական մեծ հնչեղություն և ընկալվում է որպես սոցիոմշակութային այնպիսի նորմ, որը ոչ միայն պարզապես այլոց կարծիքները, գաղափարները, ապրելակերպը, ազգային, մշակութային առանձնահատկությունները հարգելու և ընդունելու միջոց է, այլև էթնիկ և սոցիալական տարբեր խմբերի, կրոնների, մշակույթների նկատմամբ համբերատարության դրսևորման պատրաստակամություն:

Հանդուրժողականության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև ներկա սոցիոմշակութային տարածությանը բնորոշ երկու իրարամերժ միտումներով: Մի կողմից՝ համաշխարհայնացման բարդ գործընթացներով, որոնք էական ազդեցություն են թողնում արդի սոցիալական իրականության կառուցարկման վրա և մեծապես նպաստում տարբեր երկրների ու մշակույթների այնպիսի արժեքների և սկզբունքների միավորմանը, որոնք անհրաժեշտ են համակեցության և առաջընթացի, ազատ զարգացման համար (խաղաղության մշակույթ, ոչ բռնության ռազմավարություն, երկխոսություն, վստահություն, համբերատարություն և այլն), մյուս կողմից՝ ժամանակակից աշխարհում մշակութային համահարթեցման գործընթացները սկսել են լրջորեն սպառնալ ազգային ինքնությանն ու հոգեկերտվածքին, քանզի հանդուրժողականության քողի տակ ըստ էության իրականացվում է մշակութային ագրեսիա և պարտադրանք: Ըստ այդմ նշված իրարամերժ միտումների արագացման, մշակութային բազմազանության, կրոնական և էթնիկ հակամարտությունների պայմաններում հանդուրժողականությունը դիտվում է որպես սոցիալական կեցության համակարգաստեղծ այնպիսի մեխանիզմ, որը կարող է այս կամ այն չափով կարգավորել և ուղղորդել սոցիալական համակարգերի գործառնական արդյունավետությունը:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծությանն անդրադարձել են դեռևս անտիկ շրջանի փիլիսոփաներից շատերը (Կոնֆուցիոս, Հերակլիտես, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել, Ցիցերոն, Սենեկա և այլն), սակայն հիշյալ մտածողների աշխատություններում հանդուրժողականության խնդիրը հիմնականում քննարկվել է երկխոսության հաստատման համատեքստում: Հիմնախնդիրը սկսվեց համակարգային վերլուծության ենթարկվել հատկապես արդիականության դարաշրջանում, թեև այդ շրջանի մտածողները հանդուրժողականությունը մեկնաբանել են կրոնական տարբեր հայացքներ ունեցող հանրույթների միջև կոնֆլիկտների բացառման և հաղթահարման տեսանկյունից (Թ. Հոբս, Ջ. Լոկ, Շ. Մոնտեսքյո, Ժ. Ժ. Ռուսո, Ֆ. Վոլտեր, Է. Կանտ, Գ. Հեգել և այլն):

Հիմնախնդրի հետազոտության արդիականությունն առավել կարևորվեց հատկապես 19-20-րդ դարերում, որը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանին բնորոշ այլատյացության զանգվածային դրսևորումներով (լոկալ և համաշխարհային պատերազմներ, ցեղասպանություններ, միջկրոնական պատերազմներ, ահաբեկչություններ և այլն):

Հանդուրժողականության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումներն ու հայեցակարգերը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ այն գործընթացների, որոնց համատեքստում քննարկվել է հիմնախնդիրը: Մասնավորապես.

. քաղաքակրթական զարգացումների համատեքստում (Մ. Բախտին, Ջ. Գրեյ, Ա. Թոյնբի, Է. Թոֆլեր, Յու. Լոտման, Մ. Կագան, Ս. Հանթինգթոն, Հ. Մարկուզե, Կ. Պոպեր, Մ. Վեբեր և այլն),

. սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում (Վ. Բրաուն, Գ. Գադամեր, Յու. Հաբերմաս, Մ. Հայդեգեր, Կ. Յասպերս, Ա. Շյուց, Թ. Պարսոնս, Բ. Սուտոր և այլն),

. «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերությունների և երկխոսության հաստատման համատեքստում (Ն. Բերդյաև, Ու. Էկո, Է. Լևինաս, Մ. Հայդեգեր, Է. Հուսեռլ, Մ. Ռաց, Ռ. Մերտոն, Ա. Սաբլ, Ժ. Սարտր, Բ. Վալտեր, Ս. Վիդմալմ, Մ. Ուոլցեր, Ա. Քամյու և այլն),

. համաշխարհայնացման արդի գործընթացների համատեքստում (Զ. Բաուման, Պ. Բերգեր, Է. Գիդենս, Տ. Լուկման, Ս. Կարա-Մուրզա, Ա. Պանարին, Ի. Վալերստայն, Մ. Քինգ, Ֆ. Ֆուկույամա):

Հանդուրժողականության հիմնախնդրի վերլուծությունն ուղղակիորեն առնչվում է մարդու ապակառուցողական վարքի այն դրսևորումներին (ահաբեկչություն, ծայրահեղականություն, հարկադրանք, այլատյացություն և այլն), որոնց հետազոտությամբ զբաղվել են հայտնի տեսաբաններ Ժ. Բոդրիարը, Ս. Ժիժեկը, Վ. Կանտորը, Ս. Կարա-Մուրզան, Մ. Կինգը, Յու. Կլեիբերգը, Ռ.

Մերտոնը, Հ. Նազարեթյանը, Է. Ֆրոմը, Մ. Ֆուկոն և այլք: Հենց վերջիններիս հիմնարար գաղափարներն ու մոտեցումներն էլ ընկած են սույն ատենախոսության հիմքում:

Ինչ վերաբերում է հայ սոցիալ-փիլիսոփայական մտքին, ապա հարկ է նկատել, որ թեև հիմնախնդրի առանձին կողմերին (համաշխարհայնացման գործընթացներ, մշակութային երկխոսություն, բազմակարծություն, սոցիոմշակութային փոխակերպումներ, արդի ազատական-ժողովրդավարական արժեքներ, քաղաքացիական հասարակություն, ազգային ինքնություն, անվըտանգություն) հայ տեսաբանները որոշ չափով անդրադարձել են (Է. Աթայան, Է. Հարությունյան, Մ. Հարությունյան, Ա. Հովսեփյան, Վ. Միրզոյան, Ա. Մկրտիչյան, Գ. Սողոմոնյան և այլք), սակայն հանդուրժողականության՝ որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույցի և սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի, հիմնախնդիրը չի ենթարկվել սոցիալ-փիլիսոփայական համակարգային վերլուծության:

Հետազոտության օբյեկտը արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում հանդուրժողականության ֆենոմենն է:

Հետազոտության առարկան հանդուրժողականությունը որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի գործառույթների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն ու հիմնավորումն է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը հանդուրժողականության՝ որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույցի, ինչպես նաև սոցիոմշակութային տարածության և կյանքի մշակույթի կառուցարկման մեխանիզմների վերլուծությունն է, ինչը կանխորոշել է վերլուծության տրամաբանությունը և հնարավորություն է տվել հիմնախնդրի շրջանակներում առանձնացնելու տեսական և գործնական նշանակություն ունեցող երեք կարևոր ենթահարցեր.

. հանդուրժողականությունը որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց,

. քաղաքական մշակույթ և հանդուրժողականություն,

. հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման գործընթացների համատեքստում:

Նշված ենթահարցերի ուսումնասիրման և դրանց առանձնահատկությունների բացահայտման նպատակով առաջադրվել են հետազոտական մի շարք խնդիրներ.

. վերլուծել հանդուրժողականության գաղափարի ծագումը, բովանդակությունը, էվոլյուցիան, տեղն ու դերը սոցիոմշակութային արդի փոխակերպումների համատեքստում,

. հետազոտել հանդուրժողականության տարբեր ընկալումներն ու դրսևորումները՝ համբերատարություն, անտարբերություն, այլոց աշխարհայացքը ճանաչելու հակվածություն, ներողամտություն և այլն,

. հանդուրժողականությունը դիտել որպես սոցիոմշակութային իրականության կառուցարկման եղանակ, հասարակության խաղաղ համակեցության ապահովման կարևոր պայման և գրավական, սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ և համակարգող արժեք,

. հանդուրժողականությունը դիտարկել իբրև վստահության և երկխոսության պայման թե՛ միջանձնային և թե՛ հանրային փոխհարաբերություններում,

. հետազոտել արդի ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում հանդուրժողականության տեղն ու դերը որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի առանցքային բնութագրիչ,

. հանդուրժողականությունը դիտել որպես ժողովրդավարական, քաղաքական մշակույթի կարևոր տարր և քաղաքացիական հասարակության ձևավորման բարոյահոգեբանական գլխավոր սկզբունք,

. հետազոտել հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման պայմաններում որպես քաղաքակիրթ փոխզիջման նորմ միմյանց հետ մրցակցող մշակույթների միջև, մշակութային բազմազանության ու մշակութային երկխոսության ապահովման կարևոր նախապայման,

. դիտել հանդուրժողականությունը որպես «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերության հաստատման սոցիոմշակութային նորմ,

. բացահայտել հանդուրժողականության կառուցողական և ապակառուցողական գործառույթները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության հիմնական մեթոդաբանական հիմք են ծառայել պատմահամեմատական, համադրական-վերլուծական և կառուցվածքաբանական մեթոդները, որոնց միջոցով իրականացվել է հանդուրժողականության՝ որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի վերլուծությունը համաշխարհայնացման և արդի սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում: Պատմահամեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել ուսումնասիրել «հանդուրժողականություն» հասկացության ծագումը, բովանդակությունն ու պատմափիլիսոփայական էվոլյուցիան: Կատարվել է պատմահամեմատական վերլուծություն՝ բացահայտելու համար «հանդուրժողականություն» հասկացության ընկալման կրած իմաստափոխությունը պատմական տարբեր դարաշրջաններում և սոցիոմշակութային տարբեր տարածություններում: Համադրական-վերլուծական մեթոդի կիրառմամբ իրականացվել է ուսումնասիրվող օբյեկտի տարրաբաժանումը ենթամասերի, դրանց վերլուծությունը և համադրումը: Կառուցվածքաբանական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել բացահայտել սոցիալ-փիլիսոփայական, սոցիալ-

հոգեբանական, մշակութաբանական, քաղաքագիտական տարբեր հետազոտություններում հանդուրժողականության և համբերատարության, հանդուրժողականության և անտարբերության, հանդուրժողականության և հնազանդության, կրոնական, քաղաքական, սոցիոմշակութային հանդուրժողականությունների երևութաբանական նմանություններն ու տարբերությունները:

Հետազոտությունում կիրառվել են նաև մշակութաբանական, քաղաքագիտական, սոցիալ-փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական միջգիտակարգային մոտեցումներ և հետազոտական սկզբունքներ, որոնց շնորհիվ վեր են հանվել արդի հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային հիմնական գործոնները, ներքին օրինաչափությունները և զարգացման սոցիալ-փիլիսոփայական առանձնահատկությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Հիմնախնդիրը համաշխարհայնացման գործընթացների և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում հետազոտելով որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց՝ ատենախոսության մեջ առաջադրվել են գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական կարևորություն ունեցող մի շարք դրույթներ.

. Հետազոտելով հանդուրժողականության իմաստափոխության էվոլյուցիան՝ կրոնական հանդուրժողականությունից քաղաքակրթական հանդուրժողականության անցումը դիտվել է որպես ազատական-ժողովրդավարական արժեքների գիտակցման և ճանաչման, մարդու իրավունքների և ազատությունների ընդունման, համակեցության, մշակութային բազմազանության և երկխոսության նորմի ձևավորման նախադրյալ ու հիմք:

. Հանդուրժողականությունը դիտարկելով որպես երկխոսության, փոխզիջման և փոխըմբռնման, վստահության սկզբունք՝ առաջադրվել է այն դրույթը, որ հանդուրժողականությունն արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման կարևոր մեխանիզմ է:

. Բազմակողմանիորեն ներկայացնելով քաղաքակրթական և սոցիոմշակութային արդի փոխակերպումները, հիմնավորվել է այն դրույթը, որ ժամանակակից աշխարհին բնորոշ ապակառուցողական և սոցիոմշակութային տեսակետից վտանգ ներկայացնող այնպիսի միտումներ, ինչպիսիք են ազգամիջյան և միջէթնիկական բախումները, սոցիալական այս կամ այն շերտի իրավունքների ոտնահարումը, ազգային, կրոնական, մշակութային խտրականության դրսևորումները և այլն, պայմանավորված են տարբեր հասարակություններում հանդուրժողականության, որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմի, բացակայությամբ:

. Համաշխարհայնացման արդի միտումների հետևանքով տեղի ունեցող ժողովրդագրական փոփոխությունների վերլուծությունից եզրակացվել է, որ հանդուրժողականության հաստատումը կարող է նպաստել ինչպես սոցիոմշա-

կութային անվտանգության և սոցիալական կայունության հաստատմանը, այնպես էլ արդի հասարակություններին սպառնացող վտանգավոր միտումների առաջացմանը:

. Մշակութային բազմազանության և բազմակարծության, մշակութային երկխոսության և բազմամշակութային հասարակության պայմաններում հանդուրժողականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հանդես է գալիս որպես համաշխարհայնացման գործընթացներում միմյանց հետ մրցակցող սոցիոմշակութային տարբեր համակարգերի միջև քաղաքակիրթ փոխզիջման նորմ:

. Քաղաքական տարբեր համակարգերում (օրինակ՝ բաց և փակ) առկա հանդուրժողականությունների համեմատական վերլուծություններից առաջադրվում է այն դրույթը, որ կախված հասարակության բնույթից մի դեպքում (օրինակ՝ բաց հասարակության պարագայում) հանդուրժողականությունը կարող է կատարել դրական, կառուցողական գործառույթ և նպաստել հասարակական համակարգի բարելավմանն ու զարգացմանը, իսկ մեկ այլ դեպքում (օրինակ՝ փակ հասարակություններում), ընդհակառակը, նպաստել ավտորիտար և ամբողջատիրական կարգերի հաստատմանն ու ամրապնդմանը:

. Շնորհիվ այս ամենի ատենախոսության մեջ հստակեցվել են հանդուրժողականության կառուցողական և ապակառուցողական դրսևորումները, ճշգրտվել նրա դրսևորման հնարավորություններն ու սահմանները:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Ուսումնասիրելով հանդուրժողականության որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմի սոցիալ-փիլիսոփայական ասպեկտներն ու առանձնահատկությունները, պաշտպանության են ներկայացվում տեսական հետևյալ դրույթները.

. Հաշվի առնելով հասարակական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործառույթները, ատենախոսության մեջ հանդուրժողականությունն առաջին անգամ դիտարկվում է որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմ:

. Հիմք ընդունելով համակեցության կարգավորման գործում հանդուրժողականության ունեցած տեղն ու դերը, առաջադրվել է այն դրույթը, որ կախված ենթատեքստային և համատեքստային մի շարք առանձնահատկություններից՝ հանդուրժողականությունը կարող է կատարել ոչ միայն կառուցողական, այլև ապակառուցողական գործառույթներ:

. Տարատեսակ սոցիալական համակարգերում առկա հանդուրժողականությունների հնարավորությունների ու սահմանների համեմատական վերլուծության հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ հանդուրժողականության աստիճանը ուղիղ համեմատական է տվյալ հասարակության զարգացման աստիճանին:

. Անկախ հանդուրժողականության հնարավոր բացասական հետևանքներից, ամեն դեպքում մշակութային բազմազանության և բազմակարծության, կրոնական և էթնիկ հակամարտությունների պայմաններում հանդուրժողականությունը դիտարկվել է որպես սոցիալական կեցության համակարգաստեղծ մեխանիզմ, որպես խաղաղ համակեցությունն ապահովող որոշակի աշխատակարգ: Ըստ այդմ հանդուրժողականությունը զարգացած, առաջադեմ հասարակություններում խաղում է հիմնականում կառուցողական, իսկ հետադիմական, ամբողջատիրական հասարակություններում՝ գերազանցապես ապակառուցողական դեր:

. Հիմք ընդունելով նախորդ դրույթները՝ ատենախոսը պաշտպանում է այն տեսակետը, որ բազմամշակութային հասարակության ձևավորման նախագծում հանդուրժողականությունը կարող է դառնալ ոչ միայն բազմամշակութային հասարակության կառուցարկման անհրաժեշտ պայման և արժեք, երկխոսության իրականացման միջոց և մշակութային բազմազանության ընդունման եղանակ, այլև բազմամշակութային հասարակության նախագծի ձախողման հիմնական պատճառ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջադրված հարցադրումները, կատարված ընդհանրացումներն ու եզրակացություններն ունեն տեսական և գործնական նշանակություն և կարող են կիրառվել հետևյալ նպատակներով.

. Մեթոդաբանական ուղեցույցի դեր կատարել համաշխարհայնացման պայմաններում փոխակերպվող հասարակությունների վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունների համար,

. ատենախոսությունում վերլուծված հիմնախնդիրների շրջանակներում հարստացնել սոցիալական փիլիսոփայության տեսական զինանոցը,

. նպաստել հանդուրժողականության՝ որպես արդի փոխակերպվող հասարակությունների կառուցվածքաստեղծ գործոնի արդիականացմանը,

. օգտագործել սոցիալ-փիլիսոփայական, քաղաքագիտական, մշակութաբանական, հոգեբանական հետազոտություններում

. օգտագործել ԲՈՒՀ-երում «Սոցիալական փիլիսոփայություն», «Փիլիսոփայություն», «Մշակութաբանություն», «Ազգային անվտանգություն», «Քաղաքագիտություն», «Բարոյագիտություն», «Սոցիոլոգիա» դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության նախնական տարբերակը քննարկվել է ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի 2016թ. սեպտեմբերի 19-ի նիստում, իսկ վերջնական տարբերակը՝ ամբիոնի 2016թ. նոյեմբերի 15-ի նիստում և երաշխավորվել պաշտպանության:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու սկզբունքները քննարկվել են նաև՝

. ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի սեմինարներին (2012-2016 թթ.),

. ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնի սեմինարներին (2015-2016 թթ.),

. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Կյանքը և փիլիսոփայությունը» թեմայով միջազգային գիտաժողովի շրջանակներում (նոյեմբերի 22-23, 2016 թ.),

. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Լեզուն՝ մշակույթի միջոցով», «Միջմշակութային և միջլեզվական հաղորդակցության ժամանակակից մոտեցումները» միջազգային 4-րդ գիտաժողովի շրջանակներում (հունիսի 16-17, 2016 թ.),

. Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Կենսաբժշկության բարոյա-իրավական հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողովի շրջանակներում (ապրիլի 21, 2016թ.),

. ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» Միջազգային գիտաժողովի շրջանակներում՝ նվիրված ֆակուլտետի 50-ամյակին (հոկտեմբեր 10-12, 2014թ.),

. Հեղինակի գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, երկրորդ և երրորդ գլուխները՝ երկուական ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 143 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել են հետազոտվող թեմայի արդիականությունը, հիմնախնդրի տեսական մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները: Ներկայացվել են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ **«Հանդուրժողականությունը որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց»,** տրվում է հանդուրժողականության էության, նրա՝ որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման հայեցակարգի սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը:

«*Հանդուրժողականություն* հասկացության ծագումնաբանությունը, բովանդակությունն ու պատմափիլիսոփայական էվոլյուցիան» առաջին ենթագլխում ուսումնասիրվում են *հանդուրժողականություն* հասկացության ծագումնաբանությունը, բովանդակային իմաստափոխությունը, ինչպես նաև հանդուրժողականության և համբերատարության ընդհանրություններն ու տարբերությունները:

Հանդուրժողականության ընկալումն ու մեկնաբանումը տարբեր հասարակություններում և մշակույթներում տարբեր են, սակայն տարբերությունների հետ մեկտեղ կան նաև էական ընդհանրություններ: Տարբեր հասարակություններում և մշակույթներում հանդուրժողականության սոցիոմշակութային արժեքի ընդհանրական ըմբռնման ու ընկալման հիմունքներից հետևում է, որ լայն իմաստով այն կարելի է մեկնաբանել որպես մարդկանց վարքի, սովորույթների, ավանդույթների, կենսակերպի, հավատալիքների, կարծիքների, գաղափարների, ինչպես նաև ազգության, սեռի, ռասայի, կրոնի նկատմամբ համբերատարություն: Մասնագիտական բազմաթիվ վերլուծություններում և փիլիսոփայական բառարաններում *հանդուրժողականություն* հասկացությունը նույնացվում է *համբերատարություն* հասկացության հետ, և դրանք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Չնայած իմաստային բազմաթիվ ընդհանրություններին, այնուամենայնիվ դրանց միջև կան նաև մի շարք էական տարբերություններ: Եթե համբերատարությունը կարելի է դիտել որպես անընդունելի երևույթների նկատմամբ հաշտվելու, հարմարվելու վերաբերմունք, ապա այլ է վիճակը, երբ գործ ունենք հանդուրժողականության հետ: Համբերատար վարքագիծը ենթադրում է նաև թաքնված կամ անթաքույց թշնամանք ու ատելություն համբերատարության օբյեկտի նկատմամբ, ինչն անհատի սեփական ինչ-ինչ շահերի և կողմնորոշումների ճնշման և անտեսման հետևանք է, որը կարող է ի հայտ գալ համբերատարություն չդրսևորելու հետևանքով: Ի տարբերություն համբերատարության՝ հանդուրժողականությունը ենթադրում է անհատի սեփական ինքնավարության և

կամարտահայտման իրավունքի և ազատության պահպանում: Եթե համբերատարությունը նախ և առաջ ենթադրում է ներողամտություն, ապա հանդուրժողականությունը նշանակում է հարգանք դիմացինի հանդեպ, նրա հետ երկխոսելու և համագործակցելու կարողություն: Հանդուրժողականությունը ենթադրում է կառուցողական ակտիվություն, որն ուղղված է սոցիալական լայն երկխոսության հաստատմանը, մինչդեռ համբերատարությունը, ի տարբերություն հանդուրժողականության, սոցիալական վարքի դրսևորման անհամեմատ կրավորական ձև է: Հանդուրժողականությունն ամենևին էլ այլոց նկատմամբ պասիվ-կրավորական վարքի ձև չէ ի հակադրություն համբերատարության: Հարկ է նաև ավելացնել, որ հանդուրժողականությունը ենթադրում է այլընտրանքի, այսինքն՝ չհանդուրժելու հնարավորություն, մինչդեռ համբերատարության դեպքում այլընտրանքը բացակայում է:

Որպես սոցիոմշակութային կառուցվածքաստեղծ նորմ՝ հանդուրժողականությունն առաջին անգամ համընդգրկուն ուսումնասիրության առարկա է դարձել միջկրոնական հարաբերությունների կարգավորման համատեքստում: Սակայն արդեն նոր շրջանի փիլիսոփաների կողմից հանդուրժողականությունը դիտարկվել է ոչ միայն որպես միջկրոնական հարաբերությունների կարգավորման կարևոր նախապայման, այլև որպես քաղաքական հարաբերությունների կարգավորման մեխանիզմ: 20-րդ դարից սկսած հանդուրժողականությունը դիտվում է նաև որպես ընդհանրապես սոցիոմշակութային հարաբերությունների հաստատման, համակեցության, խաղաղության և բազմազանության ապահովման անհրաժեշտ գործոն: Ժամանակակից աշխարհին բնորոշ տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքական, տնտեսական անկառավարելի ցնցումներով պայմանավորված միգրացիոն հոսքերի, մշակութային երկխոսության և սոցիոմշակութային մի շարք այլ գործոնների պատճառով հանդուրժողականության սկզբունքը ձեռք է բերում առանձնակի կարևորություն:

Երկրորդ՝ **«Հանդուրժողականությունը որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ»,** ենթագլխում վերլուծվել են հանդուրժողականության՝ որպես հասարակական հարաբերությունների կանոնակարգման և կառուցվածքաստեղծ սկզբունքների, կիրառման հնարավորությունների և համակարգապահպան գործառույթի հիմնախնդիրները: Վերջին տասնամյակներում նկատվող ազգամիջյան բախումների, կոնֆլիկտների, էթնիկ հակամարտությունների և անհանդուրժողական վարքի դրսևորման պայմաններում աշխարհը դարձել է անկայուն, անկանխատեսելի և անորոշ: Սոցիալական և քաղաքական տեսանկյուններից բարդ և ռիսկային համարվող ժամանակակից աշխարհում հանդուրժողականությունը հաճախ ընկալվում է որպես տվյալ հանրույթի սոցիոմշակութային անվտանգությունն ապահովող երաշխիք և կառուցվածքաստեղծ գործոն: Հարկ է նկատել, որ էթնիկ հակա-

մարտությունները հաճախ նպաստում են միգրացիոն շարժման ակտիվացմանը, որն իր հերթին ուղեկցվում է էթնիկ բախումներով և անհանդուրժողականության դրսևորմամբ, իսկ սա արդեն ինքնըստինքյան դառնում է սոցիոմշակութային տարածության ապակառուցողական գործոն:

Ըստ այդմ ցույց է տրվում, որ հանդուրժողականությունը կարող է կատարել ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական գործառույթներ: Կախված հանդուրժողականության նպատակադրությունից՝ կարելի է տարբերակել հանդուրժողականության երկու տեսակ՝ պասիվ հանդուրժողականություն (համբերատարություն, անտարբերություն և այլն) և ակտիվ հանդուրժողականություն: Պասիվ հանդուրժողականության դեպքում հանդուրժողը (սուբյեկտը), չունենալով չհանդուրժելու, չհամակերպվելու այլընտրանք, ընդունում և հաշտվում է Ուրիշի (օբյեկտի) այլության կամ ուրիշության հետ, ընդ որում՝ համակերպումը կարող է պատճառավորված լինել ինչպես հանդուրժողի անտարբերությամբ, այնպես էլ Ուրիշի կողմից գործադրվող հարկադրանքով, անգամ բռնությամբ: Այս դեպքում սոցիալական համակեցության հաստատման կամ պահպանման տեսանկյունից հանդուրժողականությունն ունի ոչ թե կառուցողական, այլ ապակառուցողական նշանակություն, քանի որ նպաստում է սոցիալական լարվածության աճին, ինչը կարող է պատճառ դառնալ ծայրահեղականության, ահաբեկչության և բռնության այլևայլ ձևերի առաջացմանը: Մինչդեռ ակտիվ հանդուրժողականության կամ կառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է Ուրիշի այլությունը ընդունելու, հասկանալու սկզբունքը: Ակտիվ, կառուցողական հանդուրժողականության դեպքում հանդուրժողը զուտ կրավորական ենթակա չէ, այլ հանդես է գալիս որպես ներգործական սուբյեկտ, որի հանդուրժողականությունն ուղղված է ազատության սկզբունքի հաստատմանն ու կայացմանը, բազմազանության ընդունմանն ու խթանմանը, սոցիալական լարվածության մեղմացմանն ու չեզոքացմանը: Ըստ էության՝ ակտիվ կամ կառուցողական հանդուրժողականությունը ենթադրում է ոչ միայն բռնության բացառում, ոչ միայն Ուրիշի այլության հետ համակերպում, այլև Ուրիշի այլության ճանաչման անհրաժեշտության ընդունում, շահագրգռվածություն, այլոց աշխարհայացքի և մյուս տարբերությունների նկատմամբ ճանաչողական մոտեցում և այլն:

Երրորդ՝ **«Հանդուրժողականությունը որպես վստահության և երկխոսության հաստատման պայման»,** ենթագլխում հանդուրժողականությունը դիտվում է որպես վստահության և երկխոսության հաստատման ու գործառնության կարևոր պայման: Մարդկային համակեցության փորձը հաստատում է, որ մարդկանց միջև փոխհարաբերությունների ներդաշնակությունն անմիջականորեն պայմանավորված է տվյալ հասարակությունում տիրող վստահության աստիճանով: Արդի աշխարհում վստահությունը, հանդուրժողականությունը, համաձայնության գալու պատրաստակամությունը հասարա-

կական առաջընթացի, զարգացման, հասարակական հարաբերությունների կանոնակարգման ելակետային պայմաններ են: Առանց վերոնշյալ նախադրյալների անհնար է հասարակության՝ որպես ամբողջական համակարգի բնականոն գործունեությունը: Որպես փոխադարձ պայմանավորվածություն և համաձայնություն ձեռք բերելու նախապայման, վստահությունն արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գլխավոր աշխատակարգերից է: Հարկ է նկատել, որ վստահությունը, որպես սոցիալական կապիտալ, ի հայտ է գալիս այն հասարակություններում, որտեղ սոցիալական լարվածության աստիճանը գտնվում է ցածր, իսկ անվտանգությունն ու բարեկեցության աստիճանը՝ բարձր մակարդակում: Ընդհակառակը, եթե հասարակության սոցիոմշակութային կարգը երերուն է, իսկ վստահության առկայությունը պայմանավորող սոցիալական գործոնները (անվտանգություն, ապահովվածություն և այլն) բացակայում են, ապա ուտոպիա կլինի տվյալ հասարակության անդամներից ակնկալել հանդուրժողական վերաբերմունք Ուրիշի, Օտարի ազգային, մշակութային, սոցիալական կամ քաղաքական յուրահատկությունների նկատմամբ: Այս առումով բազմամշակութայնության սկզբունքով կառուցարկված ժամանակակից աշխարհակարգը կանգնած է արժեքաբանական ճգնաժամի առաջ, քանզի հանդուրժողականության և փոխհամաձայնության սկզբունքների անխտրական կիրառումը հաճախ հարուցում է բռնությունների և ահաբեկչությունների նոր ալիք, որն էլ, իր հերթին, բերում է սոցիալական կապիտալի նվազման: Արդի աշխարհում բռնության և ահաբեկչության դեպքերը հաճախ հետևանք են ոչ թե հանդուրժողականության սկզբունքի բացակայության, այլ համաձայնության սկզբունքի չկիրառման կամ խտրական վերաբերմունքի դրսևորման: Ուստի ժամանակակից աշխարհում անհրաժեշտ է հետևել ինչպես հանդուրժողականության, այնպես էլ փոխհամաձայնության հասնելու սկզբունքներին, քանզի միայն դրանց միջոցով իրականացվող երկխոսությունը կարող է դառնալ հասարակական կյանքի խաղաղ և համակողմանի կազմակերպման անհրաժեշտ նախապայման:

Երկրորդ՝ **«Քաղաքական մշակույթ և հանդուրժողականություն»,** գլխում հանդուրժողականությունը դիտվում է որպես ազատական-ժողովրդավարական մշակույթ, քաղաքացիական հասարակության կառուցարկման սոցիոմշակութային նորմ, որպես սոցիալական ներդաշնակության անհրաժեշտ պայման և ոչ-բռնության էթիկա: Քննարկվում է հանդուրժողականության տեղն ու դերն արդի ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում, «փակ» և «բաց» հասարակություններում:

Երկրորդ գլխի առաջին՝ «**Հանդուրժողականությունը որպես քաղաքական համակարգի սոցիոմշակութային բնութագիր**», ենթագլուխը նվիրված է հանդուրժողականության՝ որպես քաղաքական համակարգերի արդյունավետ գործառնության անհրաժեշտ հարացույցի սոցիալ-փիլիսոփայական

վերլուծությանը: Սոցիալական պրակտիկան հաստատում է, որ ժամանակակից բազմաբևեռ աշխարհում արդյունավետ գործել ու գործառել կարող են միայն այն հասարակությունները, որոնք ղեկավարվում են կառուցողական հանդուրժողականության սկզբունքով: Խնդիրն առավել արդիական է հատկապես հետխորհրդային հասարակություններում, որոնցում ենթակայական և առարկայական մի շարք պատճառներով հանդուրժողականությունը դեռևս լիովին չի ընկալվում որպես քաղաքական մշակույթ: Պետք է ընդունել, սակայն, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային բազմակարծության և բազմազանության ձևավորմանը զուգընթաց կարևորվում է նաև հանդուրժողականության խնդիրը: Արդի սոցիոմշակութային փոխակերպումների բացասական երևույթների ազդեցությունն առավել ակնհայտ է հատկապես անցումային փուլում գտնվող հասարակություններում, երբ փորձ է արվում մերժել և հրաժարվել անցյալի սոցիոմշակութային արժեքներից՝ որդեգրելով բոլորովին նոր, երբեմն «անորոշ» սոցիոմշակութային կողմնորոշիչներ, որոնք հասարակության կողմից դեռևս հասկանալու և ընդունելու կարիք ունեն: Որպես կանոն, անցումային հասարակություններին բնորոշ անորոշությունն ու անպաշտպանվածությունն ուղեկցվում են անհանդուրժողական վարքով և թշնամանքի ու ատելության զգացումներով ինչպես իշխող խավի, նրանց ստորադասների նկատմամբ, այնպես էլ հասարակության անդամների միջև: Անցումային հասարակություններում անպաշտպանվածությունը հաճախ ենթարկվում է քաղաքական շահարկումների, քանի որ որպես անորոշության որոշարկման ձև ընտրվում է «թշնամու» կերպարը: Այս առնչությամբ կարելի է փաստել, որ արդի հայ հասարակությանը (հատկապես նրա քաղաքական համակարգին) դեռևս բնորոշ է կոնֆլիկտայնությունը, ինչն էլ մի շարք դժվարություններ է առաջացնում ժողովրդավարական մշակույթի ձևավորման և հանդուրժողականության տարածման գործում: Անցումային հասարակություններին բնորոշ քաղաքական ու սոցիոմշակութային նման փոխակերպումները պատճառ են դառնում հասարակության կողմից թշնամական մթնոլորտի ձևավորման համար, որն ուղեկցվում է բացասական լիցքերի և անհանդուրժողական վարքի դրսևորմամբ, ինչն էլ իր հերթին բացասաբար է անդրադառնում հասարակական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործընթացների վրա:

Այս ենթագլխում դիտարկվում են նաև փակ և բաց հասարակություններում հանդուրժողականության դրսևորման առանձնահատկությունները: Տարբեր քաղաքական համակարգերում հանդուրժողականության դրսևորումները տարբեր են: Մասնավորապես՝ «փակ» հասարակություններին (ամբողջատիրական, ավտորիտար) բնորոշ են մարդկանց իրավունքների և ազատությունների սահմանափակումը, անհանդուրժողականությունը, գերիշխանության և ենթակայության միտումները: Ըստ այդմ ամբողջատիրական հա-

սարակություններում «իրավազուրկ մեծամասնությունը» հարկադրաբար հանդուրժում և ենթարկվում է գերիշխող փոքրամասնությանը: «Փակ» հասարակություններում, որտեղ իշխող փոքրամասնության կողմից ամեն կերպ ոտնահարվում և ճնշվում են անհատի ազատություններն ու իրավունքները, հանդուրժողականությունը վերածվում է համբերատարության, որի միջոցով մարդիկ կարծես հաշտվում են տիրող ապօրինությունների և անարդարությունների հետ: Այս դեպքում գործ ունենք ապակառուցողական հանդուրժողականության հետ, մինչդեռ կառուցողական հանդուրժողականության կայացման և զարգացման իրական և հնարավոր միակ միջավայրը կարող է լինել «բաց» հասարակության արժեքներով և սկզբունքներով առաջնորդվող քաղաքացիական հասարակության սոցիոմշակութային միջավայրը:

Երկրորդ գլխի երկրորդ՝ «**Հանդուրժողականության հիմնախնդիրը ազատական-ժողովրդավարական արժեքների համակարգում**», ենթագլխում վերլուծվում է հանդուրժողականության և ազատական-ժողովրդավարական արժեքների միջև եղած կապը: Ենթագլխում հիմնավորվել է այն դրույթը, որ արդի ազատական-ժողովրդավարական համակարգի և բազմամշակութային հասարակության կայացման համատեքստում հանդուրժողականությունը նպաստում է ժողովրդավարական կենսակերպի զարգացմանն ու ընդլայնմանը: Ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում հանդուրժողականությունը հավասարակշռության ապահովման, խաղաղ գոյակցման, քաղաքական մշակույթի կարևոր տարր է: Ինչպես հայտնի է, ժողովրդավարական հասարակություններում որոշումների կայացումն իրականանում է մեծամասնության կամքով (կամ գոնե պետք է այդպես լինի), և այս դեպքում մշտապես առկա է որևէ խնդրի շուրջ փոքրամասնության նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերելու վտանգը, ինչը կարող է սպառնալ սոցիալական համակեցությանը: Նման պայմաններում հանդուրժողականությունը դառնում է ժողովրդավարության կայացման և զարգացման կարևոր նախապայման, քանզի միայն այդ դեպքում է հնարավոր և՛ մեծամասնության իշխանության հաստատումը, և՛ փոքրամասնության հետ մեծամասնության փոխհամաձայնեցված գործունեությունը: Քաղաքականության մեջ հանդուրժողականության մշակույթի կայացումը նպաստում է առաջին հերթին այս կամ այն պատճառով փոքրամասնության վերածված խմբերին քաղաքական գործընթացներում դառնալ ներկայանալի և լսելի:

Երրորդ՝ «**Հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման գործընթացների համատեքստում**», գլխում հանդուրժողականությունը քննարկվում է որպես արդի սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում մշակութային երկխոսության հաստատման, բազմամշակութային հասարակության կառուցարկման, «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերությունների հաստատման սոցիոմշակութային նորմ:

Այս գլխի առաջին ենթագլխում՝ **«Մշակութային երկխոսությունը «բազմամշակութային հասարակության» նախագծի իրագործման և ձախողման համատեքստում»,** վերլուծվում են քաղաքակրթական արդի զարգացումների պայմաններում բազմամշակութային հասարակության նախագծի իրագործման և ձախողման, ինչպես նաև մշակութային երկխոսության վերաբերյալ սոցիալ-փիլիսոփայական խնդիրները, ինչպես նաև հիշյալ գործընթացներում հանդուրժողականության դերակատարության հարցը: Արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման գործընթացում երկխոսության և հանդուրժողականության սկզբունքները կարևոր են ոչ միայն միջանձնային, այլև միջմշակութային և միջքաղաքական փոխհարաբերություններում: Ժամանակակից աշխարհը մի կողմից փորձում է իրականացնել բազմամշակութային հասարակության կառուցարկման նախագիծը, որտեղ գործում են մշակութային երկխոսության, հանդուրժողականության, հավասարության, մշակութային բազմազանության և մշակութային տարբեր համակարգերի ու քաղաքակրթությունների իրավահավասարության սկզբունքները, իսկ մյուս կողմից՝ փորձ է արվում ստեղծելու համընդհանուր սոցիոմշակութային համակարգ՝ ելնելով համաշխարհայնացման և բաց հասարակության կայացման հիմնական տրամաբանությունից: Համաշխարհայնացման պայմաններում տեղի ունեցող սոցիոմշակութային փոխակերպումներն ուղեկցվում են ոչ միայն տարբեր մշակույթների մերձեցմամբ կամ միաձուլմամբ, այլև՝ ազգային դիմագծի ձևախեղման սպառնալիքով: Պատահական չէ, որ համաշխարհայնացման և մշակույթների համընդհանրացման գործընթացները հաճախ դառնում են հակամարտության և անհանդուրժողականության դրսևորումների պատճառ՝ ծնելով մշակութային ինքնատիպության կորստի վտանգ:

Եթե համաշխարհայնացումը մի կողմից ենթադրում է մարդկանց համախմբում և միավորում՝ հիմք ընդունելով մշակութային երկխոսության և մշակութային բազմազանության անհրաժեշտությունը, ապա, մյուս կողմից այն ստեղծում է այնպիսի նախապայմաններ, որոնք դժվարացնում են մշակույթների միջև երկխոսությունը: Այս դեպքում համաշխարհայնացման գործընթացները հակադրվում են մշակութային երկխոսությանը՝ նպատակ ունենալով ստեղծելու միօրինակ և համընդհանուր աշխարհ և բացառելով ամեն տեսակ բազմազանություն և բազմակարծություն: Ըստ այդմ, իրավամբ հարց է ծագում. համաշխարհայնացման պայմաններում հնարավոր է, արդյո՞ք, մշակույթների երկխոսություն առհասարակ: Ի պատասխան այս հարցի՝ կարող ենք փաստել, որ մշակութային երկխոսության իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ «ընտրվեն» սոցիոմշակութային այնպիսի նորմեր և արժեքներ, որոնք ընդունելի կլինեն երկխոսությանը մասնակից բոլոր հասարակությունների և մշակույթների համար, հակառակ դեպքում հանդուր-

ժողովականությունը կարող է դառնալ ոչ թե մշակութային երկխոսության ընթացքում ծագած խնդիրների լուծման բանալի, այլ պարզապես դրանք քողածածկող միջոց:

Ատենախոսության մեջ քննարկվել է նաև սոցիոմշակութային արդի փոխակերպումների համատեքստում բազմամշակութայնության գաղափարախոսության ճգնաժամի կամ բազմամշակութային հասարակության նախագծի ձախողման խնդիրը: Ըստ այդմ ցույց է տրվում, որ բազմամշակութայնության նախագծի ձախողման հետևանքով որոշ չափով փոխվել են հանդուրժողականության սոցիոմշակութային բովանդակությունն ու իմաստը: Եթե ավանդական մշակույթ ունեցող հասարակություններում մարդը տվյալ սոցիոմշակութային արժեքների և նորմերի հետ անհամաձայնություն կամ աշխարհայացքային հակասություն ունենալու դեպքում կարող է հայտնվել հասարակության լուսանցքում կամ էլ հարկադրաբար հարմարվել տվյալ սոցիոմշակութային կարգին, ապա բազմամշակութային հասարակությունում նա ապահովագրված է լուսանցքում հայտնվելու կամ տվյալ սոցիոմշակութային կարգին հարկադրաբար ենթարկվելու վտանգից: Սակայն այս դեպքում արդեն նա հարկադրված է ճանաչելու «Ուրիշի» գոյությունը և նրա հետ տվյալ հասարակությունում գոյակցելու անհրաժեշտությունը, որի իրականացումը ոչ միշտ է հնարավոր:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «**Հանդուրժողականությունը որպես «Յուրայինի» և «Օտարի» միջև փոխհարաբերության հաստատման սոցիոմշակութային նորմ»,** քննարկվում են համաշխարհայնացման արդի միտումների պայմաններում «Յուրայինի» և «Օտարի» փոխհարաբերությունների սոցիոմշակութային այլակերպումները, վերջիններիս գործառնական առանձնահատկությունները, ինչպես նաև այդ համատեքստում հանդուրժողականության կառուցողական և ապակառուցողական դրսևորումները: Յուրայինի և Օտարի փոխհարաբերությունների այլակերպումները համաշխարհայնացման համատեքստում պայմանավորված են արդի քաղաքակրթություններին բնորոշ սոցիոմշակութային մի շարք առանձնահատկություններով՝ ավանդականության ճգնաժամ, միաչափություն, միակերպություն, համահարթեցում, զանգվածային մշակույթի տարածման միտումներ, նույնականության և ինքնության ճգնաժամ, սոցիալական այս կամ այն համակարգում անոմիա կոչվող ապակառուցողական երևույթի առկայություն, ծայրահեղականության դրսևորումներ և այլն: Ավանդականության ճգնաժամի հետևանքով նախկինում գործառնող կենսիմաստային ուղղորդիչները կորցնում են իրենց երբեմնի կենսունակությունը՝ ծնելով նույնականության և ինքնության ճգնաժամ, իսկ արդի քաղաքակրթության սոցիոմշակութային որոշ առանձնահատկությունների (միաչափություն, համահարթեցում) տարածման հետևանքով վերանում է «Յուրայինի» և «Օտարի» սահմանազատումը, որը

կարող է այս կամ այն հասարակությունում հանգեցնել անոմիայի տարածմանը, որն էլ կարող է պարարտ հող ստեղծել ծայրահեղականության և ահաբեկչությունների զանազան դրսևորումների համար: Այս պայմաններում հանդուրժողականությունը կարող է կատարել ինչպես կառուցողական, այնպես էլ ապակառուցողական գործառույթներ: Մի կողմից այն կարող է դրսևորվել զուտ համբերատարության, անտարբերության, կոմֆորմիզմի տեսքով՝ բարձրացնելով սոցիալական լարվածության աստիճանը, ունենալ անկանխատեսելի և վտանգավոր հետևանքներ, իսկ մյուս կողմից կարող է դրսևորվել կառուցողական ակտիվ հանդուրժողականության տեսքով, ինչը ենթադրում է ինքնազարգացում և ինքնակատարելագործում՝ այլոց սոցիոմշակութային առանձնահատկությունների ճանաչման և ընդունման ճանապարհով: Կառուցողական հանդուրժողականության պայմաններում երկխոսության առկայությունն այն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է, որը կարող է դառնալ Յուրայինի և Օտարի միջև ծագած խնդիրների, կոնֆլիկտների, բախումների լուծման լավագույն բանալի:

«**Եզրակացություն**»-ում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթները, արվում մի շարք ընդհանրացումներ, որոնց հիմքի վրա կատարվել են հետևյալ եզրահանգումները.

. Հանդուրժողականությունը, որպես փիլիսոփայական եզրույթ, ի սկզբանե գործածվել է կրոնական տարբեր ուղղությունների միջև երկխոսության հաստատման նկատառումներով, սակայն արդի քաղաքակրթական, քաղաքական և սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում հանդուրժողականության բովանդակությունն ու կիրառելիության անհրաժեշտությունն ընդլայնվել է՝ ճյուղավորվելով այնպիսի ուղղությունների, ինչպիսիք են քաղաքական, միջսեռային, միջսերնդային, միջկրոնական, միջազգային և միջմշակութային հանդուրժողականությունները և այլն:

. Արդի սոցիոմշակութային փոխակերպումների պայմաններում հանդուրժողականությունը հասարակական համակարգերին բնորոշ անորոշության և անկայունության հիմնարար կարգավորիչ գործոն է: Հանդուրժողականության խնդիրն էլ ավելի է կարևորվում հատկապես անցումային կամ փոխակերպվող հասարակությունների պարագայում: Այս դեպքում սոցիոմշակութային կարգի և անվտանգության ապահովման տեսանկյունից հանդուրժողականությունը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական գործառույթ, քանզի եթե հանդուրժվում և ընդունվում է սոցիոմշակութային ցանկացած արժեք և սկզբունք, ապա կարող է խաթարվել ինչպես փոխակերպական փուլում գտնվող հասարակության քաղաքական, այնպես էլ մշակութային և ազգային դիմագիծը:

. Ժամանակակից քաղաքացիական հասարակության բնականոն գործունեության ապահովման համար հանդուրժողականությունը՝ միանգամայն

անհրաժեշտ և կարևոր պայման է: Քաղաքացիական հասարակության գաղափարախոսության իրացման հիմքում ընկած է հասարակության բոլոր անդամների իրավահավասարության սկզբունքը: Իսկ հավասար իրավունքներով, պարտականություններով և ազատություններով օժտված քաղաքացիներն անպայման պետք է լինեն հանդուրժող միմյանց մշակութային, քաղաքական, սոցիալական տարբերությունների նկատմամբ:

. Արդի ազատական-ժողովրդավարական քաղաքական կազմակերպվածություն ունեցող հասարակություններում հանդուրժողականությունը հասարակական կյանքի կազմակերպման սոցիոմշակութային կարևոր նորմ է: Հասարակական կյանքն ազատական-ժողովրդավարական սկզբունքներով կազմակերպվելու պայմաններում ի հայտ է գալիս մրցակցող անհատականությունների սոցիոմշակութային փոխհարաբերությունների այն տեսակը, որի պայմաններում հասարակության անդամները քաղաքական, սոցիալական և տնտեսական առաջխաղացման նպատակով «հարկադրված են» մրցակցելու միմյանց հետ: Մրցակցող անհատականությունների սոցիոմշակութային կարգի պայմաններում հանդուրժողականության սոցիոմշակութային նորմի որդեգրումը տվյալ հասարակությանն ապահովագրում է հնարավոր կոնֆլիկտներից:

. Քաղաքական, տնտեսական և սոցիոմշակութային համաշխարհայնացման համատեքստում հանդուրժողականությունը ձեռք է բերում առանձնակի նշանակություն, քանզի ժամանակակից աշխարհում քաղաքական, տնտեսական և մշակութային տարբեր համակարգերի միջև առկա փոխհարաբերություններն էլ ավելի են սերտանում, որն անհրաժեշտաբար հանգեցնում է քաղաքակիրթ երկխոսություն հաստատելու մշակույթի ձևավորմանը: Այս համատեքստում առանձնացվել են հանդուրժողականության երկու հնարավոր դրսևորումներ՝ կառուցողական և ապակառուցողական հանդուրժողականություն: Կառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է Ուրիշին հարգելու, նրա սոցիոմշակութային տարբերությունները ճանաչելու միջոցով ինքնազարգանալու և ինքնակատարելագործվելու, աշխարհայացքային բազմազանությունը պահպանելու սկզբունքը, իսկ ապակառուցողական հանդուրժողականության հիմքում ընկած է անտարբերությունը, այլընտրանքի բացակայությունը, կրավորական համբերատարությունը և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հանդուրժողականությունը որպես վստահության և երկխոսության պայման, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», №2 (20), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2016, էջ 36-48:

2. Մշակութային երկխոսությունը բազմամշակութային հասարակության նախագծի ձախողման համատեքստում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, «Լեզվաբանություն և բանասիրություն», №1 (38), Երևան, «Լինգվա» հրատարակչություն, 2016, էջ 674-685:
3. Հանդուրժողականության արդի ըմբռնման ակունքները. կրոնական հանդուրժողականություն, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 2 (647), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 94-101:
4. Tolerance as a Constructive Mechanism of Dialogue in the Field of Healthcare. SCIENTIFIC JOURNAL Published by the Decision of the Scientific Board of Khachatur Abovian Armenian State Pedagogical University, Department of Philosophy and Logic Named after Academician Georg Brutian, WISDOM, Vol 2 №7, Yerevan, 2016, p. 44-48.
5. Հանդուրժողականությունը որպես սոցիոմշակութային տարածության կառուցարկման եղանակ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (17), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2015, էջ 53-62:
6. Հանդուրժողականությունը որպես քաղաքական մշակույթ և ժողովրդավարության նախապայման, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 3 (144), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2014, էջ 23-30:
7. Հանդուրժողականությունը որպես կյանքի մշակույթի կառուցարկման հարացույց, ԵՊՀ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ», Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ֆակուլտետի 50-ամյակին, հոկտեմբեր 10-12, 2014, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 92-95:
8. Հանդուրժողականության հիմնախնդիրը համաշխարհայնացման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 141.4, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2013, էջ 27-35:
9. Հանդուրժողականությունը որպես արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հարացույց, «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ», Պրակ VIII, Երևան, Լիմուշ, 2011, էջ 90-96:

ПИРУМЯН ТАТЕВИК АРАИКОВНА
“ТОЛЕРАНТНОСТЬ КАК МЕХАНИЗМ КОНСТРУИРОВАНИЯ СОВРЕМЕННОГО СОЦИОКУЛЬТУРНОГО ПРОСТРАНСТВА”

Диссертация на соискание учёной степени кандидата философских наук по специальности 09. 00. 01 “Философия”

Защита состоится 19 апреля 2017 года в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г. Ереван, улица Абовяна 52а, Ереванский государственный университет.

РЕЗЮМЕ

В современном глобализированном мире в условиях цивилизационных, социокультурных, политических и антропологических трансформаций, изучение проблемы толерантности как механизма конструирования современного социокультурного пространства, приобрело теоретическое и практическое значение. Толерантность, как философская категория, в научной литературе сперва использовалась в качестве условий установления диалога между разными религиозными направлениями, однако в контексте современных цивилизационных, политических и социокультурных трансформаций толерантность приобрела дополнительную смысловую содержательность, и в современной научной среде стала использоваться в смысле политической толерантности, межцивилизационной толерантности, толерантности разных поколений, межрелигиозной толерантности, международной толерантности, межкультурной толерантности и так далее.

Современные социокультурные трансформации как в отдельных обществах, так и на цивилизационном уровне ставят перед человечеством задачу культивирования принципов толерантности, открытости, взаимотерпимости, так как в современных условиях социального бытия жить в обществе - означает принимать различия представителей других национальных, культурных, политических и социальных групп. С одной стороны, современный мир пытается развиваться по пути построения мультикультурного общества, в котором будут господствовать принципы толерантности, культурного диалога и культурного разнообразия, равенства различных культурных систем и цивилизаций, с другой стороны - делает попытку создания универсальной культурной системы. Социокультурные трансформации, происходящие в условиях глобализации, сопровождаются не только объединением различных культур, но и угрозой потерять национальную, культурную и в общем смысле социокультурную идентичность. И в этих социокультурных условиях бытия необходимо создать такие социальные механизмы, которые будут способствовать и культурному диалогу, и сохранению культурного разнообразия, что возможно только при восприятии толерантности как механизма конструирования социокультурного пространства современного общества.

В современных геополитических и внутриполитических процессах актуалность внедрения толерантности как необходимого правила политической игры становится очевидным, поскольку как в глобальном, так и в региональном масштабе общества сталкиваются с такими проблемами, как терроризм, экстремизм, военные конфликты, религиозный фундаментализм, которые являются

угрозой для социокультурного строя и порядка современных обществ. Важно отметить, что толерантность является ключевой характеристикой либерально-демократической политической системы, фундаментальной ценностью гражданского общества, которая обеспечивает основные права и свободы человека. В условиях поликультурных социальных обществ, миграций разных народов, существования нестабильных политических систем, мировых экономических потрясений появляющиеся международные конфликты можно решить только с помощью такой социокультурной политической системы, в основе которой будет находиться толерантность, требующая выслушивать иные мнения, решения и предложения.

Задача толерантности становится более значимой, особенно в переходных или в трансформационных обществах, каковым является также армянский социум. В обществах, которые находятся в процессе культурных, политических и экономических фундаментальных трансформациий, всегда есть опасность принятия не только конструктивных практик развитых обществ, но и любой практики, которая может играть и деструктивную роль для данного общества. В этом случае, с точки зрения стабильности и безопасности, толерантность может иметь как положительное, так и отрицательное значение для социокультурного строя данного общества, так как если принимаются всякие внешние социокультурные ценности и принципы, то может сложиться ситуация, при которой в опасности окажется политическая, социокультурная и национальная идентичность данного общества.

Современная социокультурная реальность сталкивает отдельных людей и общества с такими цивилизационными, политическими, социальными, культурными и экономическими вызовами и масштабными проблемами, которые можно конструктивно преодолеть только совместными усилиями всех обществ и народов мира, что возможно только при принятии толерантности в качестве ключевой социокультурной нормы и ценности всего человечества.

PIRUMYAN TATEVIK ARAYIK
"TOLERANCE AS A MECHANISM OF CONSTRUCTING CONTEMPORARY SOCIOCULTURAL SPACE"
Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophical Sciences under the specialty 09.00.01
The dissertation defense will take place on 19 April 2017, at 15:00 at Yerevan State University at the committee meeting of Philosophy and Sociology with the specialty of HCC 013.
Address: 0025, 52a Abovyan str., YSU.

RESUME

In current globalized world, which is arising from the civilizational, socio-cultural, political and anthropological transformations, study of the problem of tolerance, as a mechanism for the construction of modern social and cultural space, acquired theoretical and practical significance. Tolerance, as a philosophical category in the scientific literature first used as the condition for the dialogue between the various religions, but in the context of modern civilizational, political and socio-cultural transformations the problem of tolerance has acquired additional semantic meaning. In the modern scientific community, the category of tolerance is used as a: political tolerance, intercivilizational tolerance, tolerance between different generations, interreligious tolerance, international tolerance, intercultural tolerance etc.

Modern socio-cultural transformations in different societies and in the level of civilization confront the humanity with the global challenges, which can be sorted by the cultivation of the culture of tolerance, openness, democratic and libertarian values, as in the present conditions of social existence to live in a society means to accept differences of the other nationalities, cultural, political and social groups. In this sense, the construction of modern social and cultural space may be based on the principles of dialogue and tolerance, which are essential not only at a personal level of social communication, but also among different cultures and civilizations. On the one hand, the modern world is trying to evolve along the path of building a multicultural society, where the principles of tolerance, intercultural dialogue and cultural diversity, equality of different cultural systems and civilizations will dominate. On the other hand, it attempts to create a universal cultural system. Social and cultural transformations are taking place in the context of globalization, which is accompanied by not only an association of different cultures, but also by the treatment of losing the national, cultural and socio-cultural identity. In addition, in these socio-cultural conditions it is necessary to create such social mechanisms that will contribute to the formation of cultural dialogue and the preservation of cultural diversity, which is possible by the acceptance of the tolerance as a mechanism of construction of the social and cultural space of modern society.

In the current geopolitical and political processes, the relevance of the integration of tolerance as an essential rule in the politics is evident, because in the global and regional level the modern societies are faced such large-scale problems, as terrorism, extremism, military conflicts, religious fundamentalism which are dangerous threat for the socio-cultural system and order. It is important to note that tolerance is a key

characteristic of the liberal-democratic political system, a fundamental value of civil society, which provides the basic human rights and freedoms. In the conditions of multicultural social systems, migrations of different nations, the existence of unstable political systems, global economic fluctuations, the emerging international conflicts can be solved only with such a socio-cultural political system which will be based on tolerance, the ability of acceptance of the others solutions and suggestions. Of course, the tolerance cannot eliminate all the causes of conflicts, terrorism and wars. However, tolerance is the condition for the peaceful solution of different contemporary conflicts, such as international, intercultural, political problems.

The problem of tolerance is becoming more important, especially in the transformational societies such as Armenian society. In this kind of societies that are in the process of cultural, political and economic fundamental transformations, there is always a danger of accepting not only the effective practices of developed societies, but also an accepting of any practices that may play a destructive role for society. In this case, the tolerance can make not only positive, but also negative role for the socio-cultural system of the society in terms of stability and security, as if there were accepted all sorts of external socio-cultural values and principles, what can cause political, socio-cultural and social risks.

Modern socio-cultural reality confronts individuals and societies with such civilizational, political, social, cultural and economic challenges and large-scale problems, that they can only be constructively resolved with the efforts of all the societies and nations in the world, which is only possible by the adoption of tolerance as a key socio-cultural norm and value for all humanity.